# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/16 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | վիրաբուժական թելեր | վիրաբուժական թելեր | Թել ստերիլ վիրաբուժական, չներծծվող, մոնոֆիլամենտ: Պատրաստված է պոլիպրոպիլենից: Բաղկացած է պոլիպրոպիլենի իզոտակտիկ բյուրեղային ստերեոիզոմերից՝ սինթետիկ գծային պոլիոլեֆինից: Թելը պետք է ներկված լինի կոնտրաստ գույնով, որը հնարավորություն է տալիս ապահովել մաքսիմալ տեսանելիություն վերքի մեջ: Մետրիկ չափը 1,5 պայմանական չափը 5/0: Թելի երկարությունը 75սմ ± 5սմ: Ասեղը պետք է պատրաստված լինի կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքից, պատված լինի սիլիկոնի կրկնակի շերտով, որը նպաստում է ասեղի և հյուսվածքների միջև շփման նվազեցմանը՝ հեշտացնելով ասեղի անցումը հյուսվածքներով: Ասեղը պետք է պատրաստված լինի բարձրորակ բժշկական չժանգոտվող համաձուլվածքից, ավելի կայուն պետք է լինի անդառնալի դեֆորմացիայի նկատմամբ քան սովորական չժանգոտվող մետաղից ասեղը, որը հնարավորություն է տալիս չփոխել ասեղը վիրահատության ժամանակ՝ բարձրացնելով վերահսկողությունը ասեղի նկատմամբ և նվազեցնելով հյուսվածքների տրավմատիզացիան: Համաձուլվածքի որակը չպետք է զիջի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | AISI դասակարգումով 302 սերիայի համաձուլվածքի որակին: Ասեղը պետք է ունենա այնպիսի կառուցվածք /երկայնական ակոսիկներ ասեղնաբռնիչով բռնելու մասում/, որի շնորհիվ վստահելի ֆիքսվում է ասեղնաբռնիչի մեջ: Ասեղը ծակող, կորությունը 1/2 ,17-22մմ երկարությամբ: Փաթեթավորումը պետք է ապահովի հասանելիություն ներքին ներդիրին մեկ շարժումով՝ թելի հետ աշխատելիս խնայելով ժամանակ բուժ անձնակազմի համար: Ստերիլ կարանյութով ներքին ներդիրը պետք է պարունակի մակնշում, որն արծարծում է կարանյութի անվանումը, բաղադրությունը, ապրանքային նշանը, արտադրողի ապրանքանշանը, արտադրողի անվանումը, մատրիցային կոդ, թելի պայմանական և մետրիկ չափը, գույնը, երկարությունը, թելերի քանակը, ասեղի երկարությունը, ասեղի տեսակը, կորությունը, ասեղների քանակը: Պիտանելիության ժամկետը, պարտիայի համարը, ասեղի տեսքը բնական չափերով, ստերիլության և ստերիլիզացման մեթոդի վերաբերյալ մակնշում: Ամեն տուփը պետք է պարունակի բժշկական կիրառման ուղեցույց: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պարտադիր պետք է ունենա որակի սերտիֆիկատ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | |